«Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 1699-Ն որոշումների մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 955-Ն ԵՎ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1699-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» N 955-Ն որոշման 1-ին հավելվածի՝

1) N 1 ձևի 8-րդ գլխում «8.25» թվերով սկսվող պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններ.

8.26. «Զբոսաշրջային ավտոբուսների համար կայանատեղ».

8.27. «Բացի զբոսաշրջային ավտոբուսներից»,

8.28. «Շրջիկ առևտուր իրականացնող տրանսպորտային միջոցների համար կայանատեղ»:,

2) N 1 ձևի նկար 9-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի «**Ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին** » N 1699-Ն որոշման N 3 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 55.29-րդ, 55.30-րդ և **55.31-րդ** կետերով.

55.29. **8.26 «Զբոսաշրջային ավտոբուսների համար կայանատեղ»** ցուցանակը կիրառվում է **6.4** նշանի հետ և ցույց է տալիս, որ **6.4** նշանի ազդման գոտում թույլատրվում է կայանել միայն **Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 864-Ն որոշմանը** համապատասխան որակավորման նշան ունեցող զբոսաշրջային ավտոբուսները:

55.30. **8.27 «Բացի զբոսաշրջային ավտոբուսներից»** ցուցանակը կիրառվում է 3.27-3.30 նշանների հետ և ցույց է տալիս, որ 3.27-3.30 նշանների ազդեցությունը չի տարածվում **Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 864-Ն որոշմանը համապատասխան որակավորման նշան ունեցող** զբոսաշրջային ավտոբուսների վրա:

55.31. 8.28 «Շրջիկ առևտուր իրականացնող տրանսպորտային միջոցների համար կայանատեղ» ցուցանակը կիրառվում է 6.4 նշանի հետ և ցույց է տալիս, որ 6.4 նշանի ազդման գոտում թույլատրվում է կայանել միայն շրջիկ առևտուր իրականացնող տրանսպորտային միջոցները::

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

«____» _____ 2020 թ.

Երևան